

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՁԻ ՏԵՍԻԼԻ ՕՏԱՐ ԱՂԵՐՍՆԵՐԸ

ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ

Հայ միջնադարյան գրականության ուշագրավ երկերից է Գրիգոր Լուսավորչի տեսիլը, որը մեզ է հասել մի շարք ձեռագրերի միջոցով: Այն պահպանվել է տարբեր խորագրերով՝ «Տեսիլ սրբոյն Գրիգորի Լուսավորչի՝ յատուր միում շրջէր յանապատին», «Հարցաքննութիւն սրբոյն Գրիգորի՝ Հայոց Լուսավորչին, զոր եհարց ցհրեշտակն Տեառն մինչ էր յայրին Մանեայ (վասն հոգւոց մարդկան)» և այլն: Այս տեսիլը ստեղծվել է հայ իրականության մեջ (հավանաբար X—XII դարերում), սակայն, ինչպես բացահայտում է մանրախույզ քննությունը, այն արմատներով ձգվում է դեպի հին դարերը, դեպի հայ հեթանոսությունը, առնչվում նաև ուրիշ ժողովուրդների գրականության հետ:

Գրիգոր Լուսավորչի տեսիլը միջնադարում մեկնաբանությունների չի ենթարկվել, և այսօր անհայտ են դրա հեղինակն ու ստեղծման կոնկրետ ժամանակը: Հետաքաշում մի խումբ բանասերներ¹, առանձնապես Ֆ. Դ. Բատյուշկովը, այդ տեսիլը քննել են մի շարք տեսանկյուններից²: Սակայն մինչև հիմա չի կատարվել տեսիլի մասնագիտական մանրամասն քննություն և չեն բացահայտվել նրա աղբյուրները այլ ժողովուրդների գրականության մեջ պահպանված համանման հուշարձանների հետ:

Նախ՝ ինչի՞ մասին է Գրիգոր Լուսավորչի տեսիլը: Նրանում պատմվում է, թե ինչպես Գրիգոր Լուսավորչի շրջում էր անապատում և նրան տանջում էր մի հարց: Ի՞նչ են լինում մարդկային հոգիները մահվանից հետո: Իր այս խոհերով նա 40 օր տոչորվում է, ոչ ուտում է, ոչ խմում և ի վերջո դիմում է աստծուն ու խնդրում իրեն պատասխան տալ: Աստված ուղարկում է իր հրեշտակին, որը լսում է Գրիգոր Լուսավորչի հարցերը և տալիս պատասխաններ:

Արդեն նկատվել է, որ Գրիգոր Լուսավորչի տեսիլը իր գաղափարական միտումներով խիստ հակապատկերն է Գրիգոր Լուսավորչին վերագրվող ճառերում արտահայտված հայացքների, աչախնքն՝ հակառակ է քրիստոնեական կրոնի դոգմաներին: Այդ ճառերում հոգու անմահության հարցը կասկածի տակ չի դրվում. այն ըստ ավետարանական խոստման անմահ է. «Զի հոգիքն որ ելանեն ի մարմնոյ աստի, երթան ի կեանսն ըստ իւրաքանչիւր արժանատւթեան և անդ հրճուին առաքինեացն ոգիքն ըստ խոստացեալ աւետեաց երանութեանցն, որ կայ պահի յուսացելոց սրբոցն անճառք, որ ի կամս աստուծոյ վարեցան յաշխարհի ըստ աւետարանին քարոզութեան»³: Իսկ Գրիգոր Լուսավորչի տեսիլը ըստ էության մի հետաքրքիր երկխոսություն է հոգու և մարմնի միջև, որտեղ կրոնական թվացող վեճը ստանում է փիլիսոփայական հնչելու երանգ, վերացականությունից դառնում է ավելի ռեալ և մոտենում իրական կյանքին:

Լ. Ֆոյերբախը գտնում է, որ «սկեպտիցիզմը կրոնի երզվյալ թշնամին է»⁴: Միաժամանակ նա նկատում է, որ «աստվածաբանությունը վաղուց է դարձել մարդաբանություն»⁵: Այս առումով դիտարկելով Լուսավորչի տեսիլի

¹ Գրիգոր Լուսավորչին վերագրվող այս տեսիլի մասին առաջին անգամ բանասիրության մեջ խոսել է Ն. Մառը՝ ի նկատի ունենալով մի շարք ձեռագիր («Ամառնային ուղեորությունից դեպ ի Հայա», Վիեննա, 1892, էջ 67—71):

² Փ. Դ. Բատյուշկով, Сказания о споре души с телом в средневековой литературе («Журнал министерства народного просвещения», Спб., 1890—1891)

³ Գրիգոր Լուսավորչի, Յաճախապատում ճառք և աղօթք, Վենետիկ, 1954, էջ 175:

⁴ Լ. Ֆոյերբախ, Քրիստոնեություն էությունը, Երևան, 1968, էջ 59:

⁵ Նույն տեղում, էջ 14:

դեմահատման հարցերը, նկատում ենք, որ տեսիլում որոշակիորեն դրսևորվում է կասկած հոգու փրկության խնդրում, միաժամանակ երևում է մարդուն բոլոր ժամանակաշրջաններում հուզող ամենակարևոր հարցերից մեկի՝ կյանքի ա մահվան փոխհարաբերության հարցի լուծումը: Խիստ հետաքրքիր է տեսիլի այն հատվածը, ուր Գրիգոր Լուսավորիչը լսում է հրեշտակի բացատրությունը մեղավոր հոգիների համար սահմանված պատիժների մասին և խորապես ցնցված մտածում: արդյոք ավելի լավ չէ՞ շփվել, շապրել իրական կյանքում, եթե մարդու վախճանը այդքան սարսափելի է և սպասվում է «ճշգրիտ կորուստը»: Հոգու և մարմնի վեճը վերահիշյալ տեսիլում ընթանում է այն ուղղությամբ, ըստ որի երկուսն էլ՝ և՛ հոգին, և՛ մարմինը հավասարապես մեղավոր են և միասին են գործում բոլոր մեղքերը: հոգին ներկայացվում է որպես տեր, իսկ մարմինը որպես ձի, բայց չէ՞ որ տիրող ձեռքին են եղել ձիու երասանները, և նա ինչպես կամեցել է, այնպես էլ վարել է նրան: Նրանց վեճը հանգում է հետևյալ համարձակ եզրակացության: «Արդ միասին գործեցիք զշարիս և ի միասին տանջելու եմք ի հուրն անշէջ»: Այսինքն՝ չկա փրկության ակնկալություն: Քրիստոնեության մտածողության գերիշխանության պայմաններում՝ այսպիսի եզրահանգումը ոչ միայն շեղում է ընդունված եկեղեցական գաղափարախոսությունից, այլ իր համարձակությամբ ուղղված է հենց նրա դեմ:

Համանման գրական ստեղծագործություններ ենք տեսնում նաև ուրիշ ժողովուրդների քրիստոնեական գրականության մեջ, ինչպես, օրինակ, բյուզանդական, հին սլավոնական և այլն: Սակայն առավել հատկանշական է այն փաստը, որ նման ստեղծագործությունների հանդիպում ենք նաև հեթանոսական ժամանակների գրականության մեջ, երբ կրոնական պատկերացումներում մարմնի իշխանությունը դեռ ուժեղ էր, և հոգին չէր դարձել մարմնի ամենակարող տերը: Դրանց մեջ հավանաբար հնագույնը եգիպտական գրականության մեջ եղած մի շարք գործեր են, որոնցում քննվում են հոգու և մարմնի, կյանքի և մահվան փոխհարաբերության խնդիրները: Հին եգիպտական «Տավ-ղահարի երգը» ստեղծագործության մեջ ցավով նշվում է, որ մեռածներից ոչ ոք ետ չի գալիս հանդերձյալ աշխարհից և չի պատմում, թե ինչ է այնտեղ կատարվում: «Ոչ ոք չի գալիս այնտեղից, որ պատմի, թե ինչ է կատարվում ներանց հետ, որպեսդի պատմի նրանց վիճակը, որպեսդի հանգստացնի մեր սիրտը մինչև դուք [ինքներդ] կգնաք այնտեղ, ուր նրանք գնացին»⁶: «Տավ-ղահարի երգում», որը ստեղծված է մ. թ. ա. երրորդ հազարամյակում, տեսնում ենք որոշակի կասկած անդրշիրիմյան աշխարհի գոյության վերաբերյալ: Կյանքի հարատևության մասին եղած անհատությունը այստեղ ստանում է այլ լուծում: Ուրեմն, եթե ապագան անհայտ է, մնում է վայելել ներկան, ապրել ուրախ և շմտածել սպասվելիքի մասին: «...ողբը ոչ մեկին չի փրկում անդրաշխարհից: Չէ որ ոչ ոք իր հետ չի տանում իր բարիքները: Չէ որ գնացածներից ոչ ոք չի վերադարձել»⁷:

Ճիշտ համանման մոտիվներ են հնչում հին հնդկական մի երգում:

Քանի ապրում ենք, երջանիկ լինենք,
Այստեղ չկա մեկը, որ շմեռնի,
Երբ նա կմեռնի
Եվ մոխիր կդառնա,
Ինչպե՞ս նորից նա կվերակենդանանա⁸:

Այսօրինակ տրամադրությունների հանդիպում ենք նաև հին եգիպտական մեկ այլ աղբյուրում՝ «Հիասթափվածի զրույցը իր հոգու հետ» գործում, որտեղ հոգու և մարմնի վեճը դարձյալ հանգում է անդրշիրիմյան աշխարհի

6 Ю. Л. Францев, У истоков религии и свободомыслия, М.—Л., 1959, с. 154.

7 Նույն տեղում, էջ 514:

8 Նույն տեղում, էջ 520:

գոյության կասկածին, թերևս ժխտմանը՝ Պապիրուսի վրա պահպանված այս տեքստը եվրոպական լեզուներով ունեցել է մի շարք հրատարակություններ՝ համապատասխան մեկնաբանություններով։ «Հիասթափվածի զրույցը...» մի երկխոսություն է մարգու, որն ուզում է ինքնասպան լինել, և նրա հոգու միջև, որը համոզում է չդիմել այդ քայլին։ Մարգը բռնուն խռովքով բողոքում է իրական կյանքում եղած անարդարությունների դեմ, նրա կարծիքով ճշմարտությունը եղծվում է, մարդկանց սրտերը դարձել են դաժան, բռնությունը բռնակվել է բոլոր մարդկանց մեջ, ամենուրեք մոռացված է բարությունն ու բարերարությունը, եղբայրը դուրս է եկել եղբոր դեմ, մարդիկ իրենց իրական դեմքը ծածկել են դիմակների տակ, երկիրը հանձնված է անիրավ մարդկանց ձեռքը. «Ո՛ր ասեմ ես այսօր, Թալանում եմ, և ամեն մարդ զրկում է իր մտերիմին, Ո՛ր ասեմ ես այսօր, Չարագործին վստահում են, իսկ եղբայրը, որի հետ ապրում են, դարձել է թշնամի։ ...Ո՛ր ասեմ ես այսօր, Դեմքերը ծածկված են, յուրաքանչյուր սք թաքցնում է դեմքը իր եղբայրներից։ ...Չկան բարեպաշտներ, և երկիրը սրված է անօրինություն գործողներին։ ...Մեղքը կանում է երկիրը, և նրա վերջը չկա»¹⁰։ Մարգու հոգին այս խռովքին հանգիստ պատասխանում է, հորդորում թողնել բողոքները, ուրախ վայելել կյանքը, ավելացնելով, որ մահվանից հետո, երբ իր տիրոջ մարմինը կհանձնեն հողին, ինքն էլ կդնի նրա մոտ. երկուսով կլինեն մի տեղում։

Բանասիրության մեջ նկատվել է, որ հոգու և մարմնի խնդիրները պարունակող ստեղծագործությունները շատ ժողովուրդներին գրական հուշարձաններում իրենց հիմքում ունեն հին պարսիկների կրոնը՝ զրադաշտությունը, որի սուրբ գիրքն է «Ավեստան»։ Ցավոք, «Ավեստայի» թարգմանությունը չկա հայերեն, իսկ ռուսերենը խիստ մասնակի է։ Ֆրանսերեն թարգմանության առաջաբանում կարդում ենք. «...հին աշխարհի ազգերի պատմիչներից չկա մեկը, որ չհամարվեր «Ավեստային» հետևող, որովհետև այնտեղ ամենուր կգտնենք կապված ձեռքերով պարտված հրամանատարների, որոնց հանձնում են իրենց հաղթողներին, այնտեղ ամենուր կհանդիպենք մի երկար կյանքով ապրելու ցանկության, վախ թշնամիների հարձակումներից և երկրի բարիքների կորստից, և մինչև այսօր խոսվում է օրենսդրական հարցի և ճշմարտության շավղի մասին»¹¹։ Նշենք, որ «Ավեստայի» ազդեցությամբ հենց հին պարսկական գրականության մեջ ստեղծվել են գրական շատ հուշարձաններ, այդ թվում նաև Ֆիրդուսու հանճարեղ «Շահնամեն»։ Հին պարսկական գրականությունից մեր օրերում հայերեն թարգմանվել են հոգու և մարմնի հարցերը քննող երկու ստեղծագործություն՝ «Արտա Վիրապ նամակ»-ը և «Յուշտի Պրիան»-ը, որոնցում ժամանակի հասկացողությամբ բացատրվում է, թե ինչ է կատարվում հանդերձյալ աշխարհում։ «Արտա Վիրապ նամակից» երևում է, որ այն խիստ տարածված է եղել զրադաշտական կրոնը դավանողների մեջ։ Չրադաշտական գրական այս ստեղծագործությունը ներկայացնում է, թե ինչպես այդ կրոնի հավատացյալներին խորապես հետաքրքրել է, թե արդյոք ինչ է կատարվում մարգու հետ հանդերձյալ աշխարհում, իրոք, ինչպիսին է հանդերձյալ կյանքը։ Ահա այս կենսական հետաքրքրությունը բավարարելու համար է, որ ստեղծվել են վերոհիշյալ երկու գրքերը։ Իբր թե իրական մարդկանցից մեկը՝ Վիրապը, գնում է հանդերձյալ աշխարհ և վերադառնալով պատմում, թե ինչ բախտի են արժանանում անմեղ և մեղավոր հոգիները անդնում։ «...Ապա ցույց կտանք Աուհարմազդի և համշասպանդների հատուցումը պարկեշտներին արքայության մեջ, և մենք ցույց կտանք չարագործների տեսակ-տեսակ պատիժները և պատուհասները դժոխքում Ահրիմանից և դեերի ճնշում»-

⁹ «Труды отдела истории культуры и искусства Востока», т. 1, Л., 1939, с. 141—153.

¹⁰ Նույն տեղում, էջ 145։

¹¹ «Avesta, livre sacré du zoroastrisme», Paris, 1881, p. XIII.

ները»¹²,— Վիրապի անունից այսպես է ձևակերպվում նրա անդրաշխարհ գնալու նպատակը:

Համապատասխան ստեղծագործություն կա նաև ասորա-բաբելական դրականության մեջ, որը կոչվում է՝ «Երկխոսություն տիրոջ և ստրուկի միջև կյանքի իմաստի մասին»¹³ Վ. Ստրուվին նկատում է, որ Բաբելոնում, ինչպես Նդիպ-տոսում և Հունաստանում փրկիսոփայական ստեղծագործություններին տրվում էին երկխոսության բնույթով: Նկատենք, որ այդպիսին է հենց քրիստոնեության նախահոր՝ Փիլոն Ալեքսանդրացու (Երրայեցու) աշխատություններից մեկը, որը երկխոսություն է փրկիսոփայի և Ալեքսանդրի միջև, և քննում է հոգու և մարմնի խնդիրները¹⁴, նա նաև գտնում է, որ նման երկերը օգնում են հասկանալու քրիստոնեական կրոնի ծագումնաբանությունը: Վ. Ստրուվին նկատում է, որ բաբելական վերոհիշյալ ստեղծագործություններն առնչվում են հին եգիպտական համանման զրույցներին, միաժամանակ Աստվածաշնչին: Կյանքի ունայնության հարցերում բաբելական աղբյուրը և Աստվածաշնչի որոշ հատվածներ խիստ հոգեհարազատ են: Թե երբ է ստեղծվել բաբելական այդ ուշագրավ գրական հուշարձանն, անհայտ է, միայն հայտնի է, որ «Տիրոջ և ստրուկի զրույցի» հնագույն ձևագիրը մեզ է հասել Ասուր քաղաքի ադիսիվից և այն ծագում է VIII—VII դարերից ն. թ. ծ.»¹⁴, Տիրոջ և ստրուկի զրույցում երևում են կյանքի բազում հակասություններ: Ամեն անգամ, երբ տերը ստրուկին պատվիրում է կատաղել իր ցանկությունը, ստրուկը համաձայնվում է և հետո ինքն էլ փոշմանում և իր ցանկությանը տալիս է հակառակ բացատրություն: Օրինակ. «Կնոջ սիրո վրա գուր հույս դնելը».— Ստրուկ, պատրաստ եղիր ինձ ծառայելու — Այո՛, տեր իմ, այո՛, — Ես ուզում եմ սիրել կնոջ, — Դե՛ սիրիր, տեր իմ, սիրիր: Մարդը, որ սիրում է կնոջ, մոռանում է վիշտ ու սուգ:— Օ՛, ստրուկ: Ես կնոջ չեմ ուզում սիրել:— Մի՛ սիրիր, իմ տեր, մի՛ սիրիր: Կինը որսորդի որոգայթ է, խոր գուր է և փոս: Կինը սուրսայր դաշույն է, որը կտրում է մարդու կողոորդը»¹⁵: Երկխոսության վերջում նորից կասկած է հայտնվում հանդերձյալ աշխարհի գոյության վերաբերյալ:

Բարսեղ Սարգիսյանը գտնում է, որ Գրիգոր Լուսավորչի տեսիլը աշխարհներ ունի Ենովքի գրոց և Նզրի մարգարեության հետ, միայն թե հայկականը իր մեջ պարունակում է նոր նյութեր, որոնցով նա լրացնում է վերոհիշյալ գործերը: Միաժամանակ նա եղբայրացնում է. «Գեթ Նզրի Հարցաքննության հնագույն հատվածներն, գորս մեջ բերինք, համաձայն են զրադաշտական վարդապետության, և անտարակույս Զենդ-ավեստա գրքերին հառաջ եկած է, վասն զի այս գրոց և վարդապետության մեջ կատենք վերը հիշված բոլոր կետերը՝ զարմանալի մանրամասնությամբ»¹⁶:

Հոգու և մարմնի վեճը լայն տարածում է գտել նաև բյուզանդական և հին լավոնական գրականության մեջ: Գ. Պրոխորովը այդ հարցի մասին մանրամասն ուսումնասիրություն է գրել¹⁷: Սլավոնական վեճի օրինակում հանդիպում ենք նույն պատկերավոր համեմատությունը, ինչ որ Գրիգոր Լուսավորչի տեսիլում: Մարմինը համեմատվում է ձիու, իսկ հոգին՝ տիրոջ հետ: Ահա այդ համեմատությունը. «Զէ որ դու ես ինձ ուղղում, ինչպես ձիու երաշխակ: Զէ որ քեզնից զատ, ես ոչինչ չեմ գործում, ոչ բարի, ոչ չար... էլ ինչու ես ինձ այդքան նախատում, և ինչու ես ինձ պատվազուկում, թե բարիքը և թե չարը:

¹² Արտա Վիրապ նամակ, Յուդի Ֆրիան, Երևան, 1958, էջ 52:

¹³ Փիլոն Երրայեցի, Բանք երեք Ձեռ ի լույս ընծայելը (Յաղագս յառաջախնամութեան առ Ալեքսանդրոս), Վենետիկ, 1822:

¹⁴ «Религия и общество», Л., 1926, с. 50.

¹⁵ Նույն տեղում, էջ 49:

¹⁶ Բ. Սարգիսյան, Աստվածաբանությունը Հին կտակարանի անվավեր գրոց վրա, Վենետիկ, 1898, էջ 461:

¹⁷ Г. М. Прохорова, «Диоптра» Филиппа Пустыяника—«Душезрачительное зеркало» («Русская и грузинская средневековые литературы», Л., 1979, с. 143—166).

քո ցանկությամբ էս¹⁸։ Բերենք նույնը ըստ հայկական ձեռագրի։ «Պատասխանի ետ մարմինն և ասէ։ Ձքի մեղադիր լինիս ինձ։ Սա քո տաճար էի և բնակարան, որպէս փող ի ձեռն արուեստատորի կամ ուրպէս երեսնակ ձիւն ի ձեռն մարդոյ, զի որպէս կամի, այնպէս վարէ զնայ»¹⁹։ Ինչպես նկատվել է բանասիրության մեջ, Գրիգոր Լուսավորչի տեսիլի ազդեցությամբ առաջինը բանաստեղծություն է գրել միջնադարի նշանավոր բանաստեղծ խաչատուր Կեչառեցին՝ քննելով հոգու և մարմնի խնդիրները, պահպանելով տեսիլի գեղարվեստական մտածողության ձևերը²⁰։

Հոգիս դատախազ լինի
Մարմնոյս՝ և եղուկ տայ սրտիս,
Թէ՛ է՞ր կուտեցեր զչարիս
Յանցաւոր այս սուտ աշխարհիս...
Մարմնոյս պատասխանն է այս,
Որ ի տալ մըտացս և հոգւոյս.
Ե՞րբ պարտաւոր է՞ր առնես,
Այդ սուտ է զուր իմ խոցերոյս։
Ես ձի, և դու տէ՛ր ձիոյս,
Ես՝ ծառայ, և իշխան՝ դու գերոյս.
Կամիլդ քո՝ գործ լինէր ինձ,
Մեղ է՞ր դնես հողածնոյս»²¹։

Մեղ միայն փշրանքներ են հասել հայկական մեհենական հարուստ գրականությունից անխառն ձևով։ Բայց մենք իրավունք ունենք ասելու, որ Գրիգոր Լուսավորչի տեսիլում և նման այլ աղբյուրներում կան արձագանքներ այդ գրականությունից։ Հայտնի է, որ հայկական հեթանոսական կրոնը սերտորեն կապված էր գրադաշտական կրոնի հետ, մյուս կողմից էլ այն հարում էր հունական դիցաբանությանը, իհարկե, խստորեն պահպանելով իր բուն ազգային բնավորությունը։ Ինչպես երևում է հայ միջնադարյան գրականության ընթացքում փաստերից, Գրիգոր Լուսավորչի տեսիլը լայն տարածում է գտել հայ միջնադարյան գրականության մեջ և նրա ազդեցությամբ ստեղծվել են տարբեր ժանրի ստեղծագործություններ, տարբեր ժամանակներում, տարբեր հեղինակների կողմից։ Այդ հեղինակներից են խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Աղթամարցին, Բուդաղ օղլի Ղազի խանը, Ղուկիանոս Կարնեցին։ Այս տեսիլի մոտիվներով է ստեղծված «Ասլիկի վեպը», որը հրատարակել է Գրեգին Սովանձտյանը «Մանանա»-ում և այլն։ Նրա ազդեցությունն ենք տեսնում նաև հայկական քարոզգրքերում։ Գրիգոր Լուսավորչի տեսիլը բացահայտ շեղում է Սուրբ գրքի ընդունած կանոններից և զուր չէ, որ Բարսեղ Սարգիսյանը այն դասում է Հին կտակարանի անվավեր գրոց շարքը²²։

18 Նույն տեղում, էջ 154։

19 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3206, Թերթ 50բ։

20 Յ. Բատյուշկովը, հետո նաև Գ. Պրոխորովը և Կեչառեցու բանաստեղծությունը համեմատում են Ֆիլիպ Անապատականի տեսիլի վերահիշյալ հատվածի հետ։

21 Մ. Ավդալբեգյան, խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 152։

22 Բանասիրության մեջ կա կարծիք, որ քննվող տեսիլը հակաթոնդրական պայքարի հետևանքով ստեղծված գործ է (տե՛ս Ա. Ս. Մ. և ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 620)։

ИНОСТРАННЫЕ ПАРАЛЛЕЛИ ВИДЕНИЯ ГРИГОРА ЛУСАВОРИЧА (ПРОСВЕТИТЕЛЯ)

АЭЛИТА ДОЛУХАНЫ

Резюме

Видение Григора Лусаворича одно из интереснейших литературных памятников армянского средневековья, относящееся к X—XII вв. Оно давно привлекло внимание филологов своим антиклерикальным содержанием. Философские вопросы жизни и смерти, тела и души, которые затрагиваются в видении Григора Лусаворича, имеют свои параллели в древнеегипетских, ассиро-вавилонских памятниках, сходные идеи встречаются в «Авесте» и созданных на ее основе литературных памятниках. Как показывает исследование, этот памятник своими корнями восходит в то же время к языческой литературной культуре древних армян.